

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2011թ. հուլիսի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ս.թ. հուլիսի 7-9-ը Դոնի-Ռոստովում կայանալիք հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստի նախապատրաստական խորհրդակցությանը»,
- ✓ 2011թ. հուլիսի 6-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ժողովրդավարական կառավարման գծով UNDAF/UN Development Assistance Framework» աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2011թ. հուլիսի 11-15 ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Լոռու մարզային գործակալության պետ Վ. Մանուկյանը, նույն գործակալության ամփոփ վիճակագրության բաժնի պետ Ա. Փիլոյանը, տարածքային վիճակագրության բաժնի Վանաձորի գլխավոր մասնագետ Ա. Ղազարյանը, տարածքային վիճակագրության բաժնի Վանաձորի առաջատար մասնագետ Ա. Պետրոսյանը, ամփոփ վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Առաքելյանը, ճյուղային և սոցիալական վիճակագիր Ա. Ղազարյանը մասնակցել են ՀՀ ԱՎԾ Լոռու մարզային գործակալությունում կայացած «Դեվինֆո տվյալների բազայի կառավարում» խորագրով դասընթացին,
- ✓ 2011թ. հուլիսի 18-22ը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած Արտակարգ իրավիճակների քաղաքական և ռազմական պատրաստվածության և պաշտպանական սպառնալիքի նվազեցման գրասենյակի միջգերատեսչական շտաբային վարժանքին,
- ✓ 2011թ. հուլիսի 25-29-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Տավուշի մարզային գործակալության պետ Ա. Աջինյանը, նույն գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի պետ Մ. Չախմախյանը, ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ենգիբարյանը, ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Խաչատրյանը, ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի վիճակագիր Լ. Հովհաննիսյանը, ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի վիճակագիր Ա. Մեհրաբյանը մասնակցել են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Տավուշի մարզային

գործակալությունում Դեվինֆո-ի տվյալների բազայի ստեղծման նպատակով կազմակերպված հրահանգավորմանը,

- ✓ 2011թ. օգոստոսի 1-3ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք.Երևանում Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության գրասենյակի կողմից կազմակերպված «Միգրացիայի կառավարման հիմունքներ» թեմայով վերապատրաստմանը,
- ✓ 2011թ. օգոստոսի 4-5ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Զ. Ավոյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Միգրացիոն տվյալների հավաքագրում, փոխանակում և վերլուծություն» վերնագրով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2011թ. օգոստոսի 12-14ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցեցել է ք. Ադվերանում կայացած Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թ.թ. գործողությունների ծրագրի նախագծի շուրջ կլոր սեղան-քննարկմանը: